

միայն կը լինէր կատարեալ զենու մն: — Վերջապէս կանխաւ դիտաւորութիւն եւ նպատակ դնելու է մատաղին: Այս պայմաններէն եթէ բան մը պակաս է, «պիղծ է, կ'ըսէ, եւ խոտան, եւ ոչ է ուտելի զենեալն» (Հրց. 365): — Դիտելի է եւ այս՝ որ զենու մը պիտի կատարուի «դէպ յարեւելս» եւ «յանուն սրբոյ Երրորդութեանն» (անդ, 366). պարագայ մը՝ որ այլուստ անծանօթ է ինձ եւ չափազանց այս առթիւ մէջ:

10. — Եփեսոս ձեռ: — Նոյն վարդապետը կ'աւանդէ՝ թէ մատաղն «ի հոշր խորովեալ ողջակիզեմը» (անդ, 657): Միակ եղանակն է այս՝ որով կ'եփէին զատկական զառն ալ, ինչպէս պիտի տեսնենք, եւ որ կը ծագէր հրէական զատկի ոչխարին «խորովելէն» (Եւր, ԺԲ, 8):

Տաթեւացին կը յարէ՝ թէ յետ այսպէս եփելու՝ «գիշոյ ակոյշ մատուցանեմք» (Հրց. 657). այս ինքն կը ցանէին մսին վըրայ. առնուած հաւանօրէն հրէականէն, որ նաշոյ եւ կամ արմտեաց «գոհին» վըրայ կը պատուիրէր իւղ եւ կնդրուկ դնել (Ղեւտ. Բ, 1, 15): Սուան Յովհանն զամասկացին եւս, զոր ես դատելով իւր «առ Հայս պատասխանեաց» բովանդակութեանէն՝ ԺԱ զարու գրիչ կը համարիմ, կը